2132.7140

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«19» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0016-21

Ձեռնարկողը՝ ***«Սյուզի-Հրաչյա» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, գ.Զոլաքար

Գործունեությունը՝ ***Զորագյուղի (Ծակքարի) պեղիտային ավազների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0016-21

« 19 » 01 2021թ.

Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի /Ծակքարի/ պեռլիտային ավազների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնակող՝	«Սյուզի Հրաչյա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ձորագյուղ համայնք

Ներածական մաս. Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազների հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ համայնքի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրներն են Երանոս, Վարդաձոր և Ծակքար գյուղերը: Համաձայն Ձորագյուղ համայնքի հողերի կադաստրային քարտեզների՝ հանքավայրի տարածքը ներկայացված է ընդերքօգտագործման նպատակային նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ) ենթակետի հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազների հանքավայրի պաշարները հաստատված են ՀԽՍՍՄ Երկրաբանական վարչության ՊՏՀ-ի 1976թ-ի նոյեմբերի 3-ի թիվ 232 արձանագրությամբ:

Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազները բավարարում են 9757-73 «Заполнители пористые неорганические для легких бетонов. Классификация и общие технические требования» ԳՈՍՏ-ի պահանջներին և կարելի է օգտագործել որպես թեթև, ծակոտկեն լցանյութ:

Հանքավայրը «Սյուզի Հրաչյա» ՍՊ ընկերությունն ընդերքօգտագործման 31.10.2012թ. ՊՎ-220 պայմանագրի շրջանակներում շահագործել է մինչև 2017թ.: Այդ ընթացքում ընկերության կողմից արդյունահանում իրականացվել է մոտ 2.4հա մակերեսի վրա, կենտրոնական մասում իջնելով մինչև 1952մ հորիզոն: Նախագծի համաձայն, հանքի սահմաններում (3.57հա)

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈՇ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

օգտակար հանածոյի մնացորդային հաշվեկշռային պաշարները կազմում են 533620մ³, արդյունահանվող պաշարների՝ 484800մ³: Տարեկան արտադրողականությունը՝ 10672.4մ³ մարվող պաշար, տարեկան արդյունահանվող պաշարի քանակը՝ 9696մ³: Նշված պաշարները կապահովեն բացահանքի աշխատանքը 50 տարի:

Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացվելու են առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Աշխատանքները կկատարվեն էքսկավատոր, ավտոինքնաթափ, բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:

Հանքարդյունահանման աշխատանքները կատարվելու են մեկ հերթ, շուրջտարյա, աշխատանքային ռեժիմով՝ 260օր:

Հաշվի առնելով տեղամասերի երկրաբանական, հիդրոերկրաբանական և գեոմորֆոլոգիական պայմանները, ինչպես նաև մակաբացման ապարների ոչ մեծ հզորությունը, հանքավայրի տեղադիրքը, հանքամարմնի տեղադրման պարամետրերն ու տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 276մ,
- ամենամեծ լայնությունը – 174մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.54մ, որից հողաբուսականը՝ 0.2մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 40.2մ,
- մակաբացման ապարների քանակը – 6100մ³, որից 2240մ³-ը՝ հողաբուսական շերտ:

Հանքավայրի մշակման ընթացքում առաջանում են կորուստներ, որոնք որոշվել են առանձին-առանձին.

- կորուստներ, որոնք մնում են բացահանքի կողերում՝ 48820մ³ կամ 9.15%,
- կորուստները ավտոինքնաթափերով փոխադրելու ընթացքում չնչին են և դրանք չեն հաշվառվել:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքները բնականոն շարունակելու համար բացումը կիրականացվի դրա 1980.0մ բարձրության հորիզոնից: Հանքավայրի արևելյան մասով անցնող ավտոճանապարհից նախատեսվում է 40մ երկարությամբ 8մ լայնությամբ ավտոճանապարհի կառուցում: Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 5մ:

Հանույթային և բարձման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1.0մ³ շերեփի տարողությամբ CAT-428F մակնիշի էքսկավատոր, որի արտադրողականությունն է 250մ³/հերթ: Բացահանքից պեռլիտային ավազների տեղափոխումը մինչև գոյություն ունեցող ջարդող տեսակավորող կայանք, որը տեղադրված է բացահանքի սահմաններում՝ բացահանքի արևմտյան՝ նախկինում ոչ լրիվ արդյունահանված հատվածում, նախատեսվում է իրականացնել KAMAZ 5511 ավտոինքնաթափով:

Հանքավայի շահագործման սկզբնական շրջանում հողաբուսական շերտը մոտ 2240մ³ ծավալով, բուլդոզերով, կկուտակվի առանձնացված տեղում նախկինում տեղադրված հողակուտակի վրա, իսկ մակաբացման ապարները ավտոինքնաթափով կտեղափոխվեն և ժամանակավոր կտեղադրվեն բացահանքի ներսում՝ դրա կենտրոնական մասում, նախկինում արդյունահանված /ոչ լրիվ հզորությամբ տարածքում/ N1 լցակույտ: Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է KO-503 մակնիշի ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ШН-БЦБ -1.4 ջրի ցիստեռնով: Անհրաժեշտ ջուրը վերցրվում է Ձորագյուղի ջրամատակարման ցանցերից ՋՕ պայմանագրերի համաձայն:

Իրենց ճառագայթահիգիենիկ հատկություններով հանքավայրի պաշարները համապատասխանում են НРБ-96 նորմատիվային փաստաթղթի պահանջներին և կարող են օգտագործվել շինարարական աշխատանքներում՝ առանց սահմանափակման:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բացահանքում կատարվող բոլոր լեռնային աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով «Հանքավայրերը բաց եղանակով մշակելու անվտանգության միասնական կանոնների» և «Հանքավայրերի տեխնիկական շահագործման կանոնների» պահանջները:

Բացահանքի շահագործումը կթուլացնի սոցիալական լարվածությունը, քանի որ աշխատողների հիմնական մասն ընդգրկվելու է Ձորագյուղ համայնքից: Անուշադրության չի մատնվելու համայնքը, որի հոգսերի մի մասը իր վրա կվերցնի ընկերությունը: Հանքավայրի շահագործման ընթացքում նախատեսվում է բացահանքում աշխատանքի մեջ ընդգրկել մոտակա գյուղերի բնակիչներին:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Մակաբացման աշխատանքների ընթացքում հանված հողաբուսական շերտը /նախկին 1200մ^3 և նոր 2240մ^3 / ընդհանուր 3440մ^3 ծավալով կկուտակվի հանքավայրի տարածքում 0.23հա տարածքի վրա 1.5մ բարձրությամբ հողաթմբով և դրանց ջրային և հողմնային հողատարումից պահպանելու նպատակով հողաթմբի մակերեսին և կողերին կիրականացվի տարածքի համար բնորոշ խոտաբույսերով ճիմի առաջացում: Հետագայում այդ հողերը կօգտագործվեն տարածքների ռեկուլտիվացիայի նպատակով: Ռեկուլտիվացման աշխատանքները նախատեսվում է կատարել 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում նախ բացահանքի հատակում կփռվեն ժամանակակից առաջացումները, ապա դրանց վրա պայմանական հողային շերտը: Ներքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 2.08հա: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 1043800դրամ:

Պեռլիտային ավազների արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ինչպես արդեն ներկայացվել է հանքավայրի տարածքն իրենից ներկայացնում է մարդածին ազդեցության ներքո վերափոխված լանդշաֆտ՝ խախտված հողերով, բացահանք, արտադրական հրապարակներ, ճանապարհներ, այդ իսկ պատճառով նոր տեխնածին ճնշումների դրսևորումը կենդանական և բուսական աշխարհի վրա չի ծրագրավորվում:

Հողային ռեսուրսների վրա տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ Կառավարության 25.01.2005թ. 92-Ն որոշմամբ հաստատված կարգի: Բացահանքի օտարման տարածքը կազմում է 3.57հա: Տնտեսական վնասը կկազմի 1145.9հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները, այդ թվում՝

-Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ և այլ) ինտենսիվ ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ):

- բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա,
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավորինս թփուտներով կանաչապատում:
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր գազերի չեզոքացման համար,
- նավթամթերքների պահեստավորում և պահում՝ արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

համապատասխան թեքություն, ինչն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի առանձին տարաների մեջ հավաքում՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում՝ առանձին հատկացված տեղում և հանձնում՝ որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում՝ մոտակա աղբահավաք կետեր,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, ինչը հետագայում դատարկվում են հատուկ ծառայության ուժերով,
- բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781 որոշման դրույթները:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ու պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում Ձորագյուղի պեռլիտային ավազների հանքավայրի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում տարածքի շրջակա միջավայրի բոլոր բաղադիչների աղտոտվածությունը կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին (շրջակա միջավայրի՝ մթնոլորտային օդի, հողի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա ազդեցության կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված բնապահպանական, արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր):
- Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն) մոնիթորինգի արդյունքները, հանքավայրեր շահագործող ընկերությունների կողմից, համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և կառավարության «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման, պետք է յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրի նախարարությանը տրամադրվի տարեկան հաշվետվություն և հանրային իրազեկվածության ապահովման նպատակով այն տեղադրվի նախարարության կայքում:
- Հանքի շահագործման ժամանակ պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի համաձայն:

ՀՀ ԱՇՐԱՏԱՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՓՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Ռեկուլտիվացման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ կառավարության 14.12.2017թ. N1643-Ն որոշումով հաստատված տեխնիկական կանոնակարգով:
- Արդյունահանման աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով և բնապահպանական այլ իրավական ակտերով ամրագրված պահանջների կատարումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սյուզի-Հրաչյա» ՍՊԸ կողմից Ձորագյուղի /Ծակքարի/ պեռլիտային ավազների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մեսրոպյան